ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՌԱՀԱՏՎԱԾ ՄՈԴԵԼԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՐՄԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ազգային տնտեսությունները ուսումնասիրելիս ելակետ է ընդունվում տնտեսության եռահատված տեսությունը, որի հիմքերը դրել է Քոլին Քլարկը դեռևս 1940 թ.[1]: Ըստ հեղինակի՝ տնտեսությունը բաժանվում է երեք հատվածի, և այդ իսկ պատճառով այն անվանում են տնտեսության եռահատված մոդել: Այս մոդելի առաջնային հատվածում միավորվում են այն ճյուղերը, որոնք զբաղված են հումքի արդյունահանմամբ և դրանցից կիսաֆաբրիկատների ստացմամբ: Այս հատվածին են դասվում նաև գյուղատնտեսությունը, որսորդությունը, անտառային և ձկնաբուծական տնտեսությունները: Այն երկրները, որոնց տնտեսության մեջ գերակշռող է այս հատվածը, անվանում են ագրարային երկրներ:

Եռահատված մոդելի երկրորդային հատվածը միավորում է վերամշակող արդյունաբերությունը և շինարարությունը: Եթե երկրի տնտեսության մեջ դա գերակշռող է, ապա այն արդյունաբերական է:

Իսկ երրորդային հատվածն ընդգրկում է ծառայությունների ոլորտը, որի գերակայությունը նշանակում է, որ երկիրը գտնվում է հետարդյունաբերական զարգացման փուլում:

Նշենք նաև, որ որոշ հեղինակներ երրորդային հատվածից առանձնացնում են չորրորդայինը՝ տեղեկատվականը: Չորրորդային հատվածի գերակայությունը վկայում է, որ գործ ունենք տեղեկատվական հասարակության հետ, և որ այս տիպի տնտեսությունն ընդգրկում է աշխարհի բնակչության ընդամենը 15,6 %-ը[2]:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ 2014-2016 թթ. ՀՀ տնտեսության մեջ գերակշռող է եղել երրորդային հատվածը: Պատկերն ամբողջական ու տեսանելի ունենալու համար անդրադարձ կատարենք մինչանցումային շրջանի Հայաստանի տնտեսությանը:

Վերլուծելով ՀՀ տնտեսությունը եռահատված մոդելի տեսանկյունից՝ կունենանք հետևյալ պատկերը.

---

[1] Տե՛ս **Colin Clark**. Conditions of Economic Progress. Macmillan and co. limited, London, 1940, էջ 504:

[2] Տե՛ս «Национальная экономика», под ред. П. В. Савченко, М., ИНФРА, 2011, էջ 63:

Աղյուսակ 1[3]

ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ հատվածների (2014-2016թթ.)
(մլն դրամով և տոկոսային արտահայտությամբ)

	2014	2015	2016
ՀՆԱ շուկայական գներով	**4828626.3** **100**	**5043633.2** **100**	**5079864.6** **100**
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաները)	546334.9 11.3	535801.1 10.6	508697.0 10.0
Համախառն ավելացված արժեք	4282291.4 88.7	4507832.1 89.4	4571167.6 90.0
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ			
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	872631.1 20.4	868671.0 19.3	809723.4 17.7
Հանքագործություն և բացահանքերի շահագործում	102553.2 2.4	107717.5 2.4	132416.1 2.9
Ընդամենը առաջնային հատված	***975184.3*** ***22.8***	***976388.5*** ***21.7***	***942139.5*** ***20.6***
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ			
Վերամշակող արդյունաբերություն	466754.6 10.9	464325.5 10.3	466608.4 10.2
Էլեկտրաէներգիայի, գազի և ջրի մատակարարում	202139.2 4.7	250502.5 5.6	250906.7 5.5
Շինարարություն	448772.6 10.5	474107.0 10.5	406201.3 8.9
Ընդամենը երկրորդային հատված	***1117666.4*** ***26.1***	***1188935.0*** ***26.4***	***1123716.4*** ***26.4***
ԵՐՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ			
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում	570369.0 13.3	551484.5 12.2	537766.6 11.8
Կացության և հանրային սննդի կազմակերպում	55106.1 1.3	60263.3 1.3	66202.5 1.4
Տրանսպորտ և հեռահաղորդակցություն	306736.7 7.2	296812.0 6.6	296276.0 6.5
Ֆինանսական միջնորդություն	206610.0 4.8	196289.5 4.4	205432.8 4.5
Անշարժ գույք, վարձակալություն և բիզնես գործունեություններ	403714.9 9.4	437501.1 9.7	491235.2 10.7
Պետական կառավարում	207902.5 4.9	244553.5 5.4	260199.0 5.7
Կրթություն և մշակույթ	225872.5 5.3	311716.8 6.9	389946.2 8.5
Առողջապահություն և սոցիալական աշխատանք	185899.9 4.3	198219.1 4.4	208048.1 4.6
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ	-99958.0 -2.4	-89161.6 -2.0	-92110.0 -2.0
Սպասարկման այլ ծառայություններ	127187.1 3.0	134830.4 3.0	142315.3 3.1
Ընդամենը երրորդային հատված	***2189440.7*** ***51.1***	***2342508.6*** ***51.9***	***2505311.7*** ***54.8***

[3] Աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2017 թ.», էջ 238:

Աղյուսակ 2[4]

ՀԽՍՀ համախառն հանրային արդյունքն ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի (փաստացի գործող գներով, միլիոն ռուբլի)

	1980	1985	1989
Համախառն հանրային արդյունքը, այդ թվում՝ ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի	10374.3 100	13286.1 100	14701.5 100
Արդյունաբերություն և շինարարություն	8114.2 78.2	104055.8 78.3	11849.8 80.6
Գյուղատնտեսություն	1161.1 11.2	1679.2 12.6	1455.6 9.9
Սպասարկման ոլորտ (ընդհանրացված)	1099 10.6	1201.1 9.1	1396.2 9.5

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, Խորհրդային Հայաստանը եղել է արդյունաբերական երկիր, իսկ ծառայությունների ոլորտը համախառն հանրային արդյունքում կազմել է 9-10 տոկոս:

Հայաստանի տնտեսության ներկա պատկերը ոչ թե ՀԽՍՀ տնտեսության բնականոն զարգացման հետևանք է, այլ, ցավոք, նրա փլուզման: Ինչպես գիտենք, ԽՍՀՄ տնտեսությունը հիմնված էր միջհանրապետական կապերի վրա, որոնց խզումից հետո տնտեսության ոչ բոլոր ճյուղերը շարունակեցին գոյատևել կամ էլ զարգանալ նախկին տեմպերով, ուստի 1990-1993 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՆԱ-ն նվազեց ավելի քան երկու անգամ:

Մեր առջև դրված խնդրի պարզաբանման համար անդրադառնանք ՀԽՍՀ տնտեսության ոլորտներում զբաղվածների բաշխվածության խնդրին(տե՛ս աղյուսակ 3).

Աղյուսակ 3[5]

ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բնակչության բաշխումն ըստ ճյուղերի (առանց սովորողների, տոկոսներով)

	1980	1985	1989
Ընդամենը ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածներ, այդ թվում՝	100	100	100
Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	22	20	18
Արդյունաբերություն և շինարարություն	38	39	41
Սպասարկման ոլորտ (ընդհանրացված)	40	41	41

[4] Աղբյուրը՝ «Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թ.», վիճակագրական տարեգիրք (Հայաստանի Հանրապետության վիճակագրական, Եր., Հայաստան, 1991, 260 էջ), էջ 9:

[5] Աղբյուրը՝ նույն տեղում, էջ 18:

Ինչպես տեսնում ենք, զբաղվածների մոտ 60 %-ը ներկայացնում են առաջնային և երկրորդային հատվածները, իսկ սպասարկման ոլորտում ընդգրկված է զբաղված բնակչության 40 %-ը: Նշենք նաև, որ երրորդային հատվածում զբաղվածների 50 %-ը ներկայացնում են գիտության, կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտները: Իսկ ինչպիսի՞ն է պատկերն այսօր:

Աղյուսակ 4[6]

Զբաղվածներն ըստ տնտեսության հատվածների Հայաստանի Հանրապետությունում (2014-2016 թթ., տոկոսներով)

	2014	2015	2016
Զբաղվածներ	100	100	100
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	35.5	36.2	34.5
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	16.0	15.1	14.9
ԵՐՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	48.5	48.7	50.6

Աղյուսակ 4-ի տվյալները վկայում են, որ տեղի է ունեցել զբաղվածների վերաբաշխում ոլորտների միջև. երրորդային հատվածը զբաղվածների տեսակարար կշռով հավասարվել է առաջնային և երկրորդային հատվածների գումարին: Ցավոք, սա ոչ թե բնականոն զարգացման, այլ ավելի շուտ տնտեսական խոր անկման և անարդյունավետ տնտեսավարման հետևանք է:

Տնտեսության կտրուկ փլուզումից հետո մեր երկրում առաջացավ գործազուրկների մեծ բանակ, որի աշխատանքով ապահովելու հարցը պետությունն ի վիճակի չէր լուծելու: Սկսվեց ինքնատեղավորման մի գործընթաց, որը ոչ մի կապ չուներ մասնագիտական ունակությունների հետ: Բարձրագույն կրթություն և որակավորում ունեցող մարդիկ առօրյա հացը ապահովելու համար հորդեցին սպասարկման ոլորտ՝ առևտուր, սնունդ, տաքսի ծառայություն, վարսահարդարում և այլն: Այսինքն՝ սպասարկման ոլորտում զբաղվածների թվաքանակի աճը հանգեցրեց այդ բնագավառում արդյունքի մեծացման, որը նրան եռահատված մոդելում դուրս բերեց առաջին տեղ: Հենց այս պատճառով էլ մենք չենք կարող ասել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը հետարդյունաբերական է. այստեղ ավելի շուտ գործ ունենք ձևախեղված տնտեսության հետ, որը գտնվում է անընդհատ վերափոխումների գործընթացում, ինչը բնորոշ է անցումային շրջան ապրող խորհրդային բոլոր նախկին հանրապետություններին[7]:

Գործազուրկների հոսքը դեպի սպասարկման ոլորտ հանգեցրեց դրական որոշ տեղաշարժերի: Մասնավորապես բարձրացավ սպասարկ-

[6] Աղբյուրը՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017 թ.», էջ 60:

[7] Տե՛ս «Национальная экономика Беларуси», под ред. В. Н. Шимова, Минск, БГЭУ, 2009, էջ 20:

ման մակարդակը, բայց քանի որ ճգնաժամն ընդգրկել էր տնտեսության բոլոր հատվածները, սպասարկման ոլորտը նույնպես կրեց վնասներ. մասնավորապես նվազեց գիտության, կրթության, առողջապահության և մշակույթի աշխատողների տեսակարար կշիռը սպասարկման ոլորտի ընդհանուր աշխատողների մեջ՝ 50 %-ից հասնելով մոտ 32 %-ի:

Եթե փորձենք տալ Հայաստանի Հանրապետության ծառայությունների ոլորտի ընդհանուր բնութագիրը, ապա պետք է նշել, որ այն ներառում է ծառայությունների 11 տեսակ և ունի հետևյալ կառուցվածքը (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5[8]

Ծառայությունների ոլորտի կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում 2014-2016 թթ. (տոկոսներով)

Ծառայության տեսակ	2014	2015	2016
Ընդամենը	100	100	100
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	21.8	20.2	19.5
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	9.2	15.4	18.7
Տեղեկատվություն և կապ	20.5	19.1	17.4
Տրանսպորտ	16.6	12.9	13.3
Կացության և հանրային սննդի կազմակերպում	7.7	7.9	7.5
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	5.4	5.6	5.3
Վարչարարական և օժանդակ գործունեություն	5.1	5	4.8
Կրթություն	4.1	4.2	4.1
Առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկում	4	3.9	3.7
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	3.9	3.6	3.7
Սպասարկման այլ ծառայություններ	2	2.2	2

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանի Հանրապետությունում ծավալային առումով առաջին տեղում է ֆինանսական և ապահովագրական գործունեություն մատուցող ծառայությունը, երկրորդում՝ մշակույթ, զվարճություններ և հանգիստն է, որը երկու տարում ապահովել է նկատելի թռիչք՝ շնորհիվ զբոսաշրջության զարգացման, իսկ երրորդում՝ տեղեկատվությունն ու կապն են, որոնց երկրի կառավարությունը վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձնում:

[8] Աղբյուրը՝ «ՀՀ ծառայությունների ոլորտի վերլուծություն, Avenue consulting group LLC», Եր., 2017, էջ 35:

Հետարդյունաբերական և այլ երկրների ծառայությունների ոլորտի կառուցվածքային տարբերությունները հասկանալու համար առաջին հերթին պետք է նշել, որ նրանք ծառայությունների ոլորտն ըստ տեսակների բաժանում են այլ սկզբունքներով: Զարգացած երկրների ծառայությունների ոլորտը ներառում է մոտ 150 տեսակի ծառայություն, որոնք նորարարության տեսանկյունից բաժանված են 5 խմբի[9]: 1-ին, 2-րդ և 5-րդ խմբերը վերաբերում են ավանդական ծառայություններին, իսկ 3-րդ և 4-րդ խմբերը՝ գիտատար: Առաջին խմբի մեջ մտնում են առևտուրը, հանրային սնունդը, հյուրանոցները, երկրորդ խմբի մեջ՝ տրանսպորտը, կապը, կոմունիկացիաները, երրորդում՝ ֆինանսները, ապահովագրությունը, գործարար ծառայությունները, չորրորդում՝ կրթությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը և վերջապես հինգերորդում՝ պետության կողմից մատուցվող ծառայությունները: Հետարդյունաբերական երկրների ծառայությունների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հինգ խմբերից առաջատարը երրորդ խումբն է, որին հետևում է չորրորդը, այսինքն՝ առաջատարը գիտատար խմբերն են: Այդ երկուսն ապահովում են ամբողջ ծառայությունների ծավալի 60 %-ից ավելին (մոտ 2/3-ը բաժին է ընկնում 3-րդ խմբին, 1/3-ը՝ 4-րդ)[10]: ՀՀ ծառայությունների կառուցվածքում այդ ցուցանիշը հասնում է մոտավորապես 30 %-ի: Մի էական տարբերություն ևս. զարգացած երկրների ՀՆԱ-ում ծառայությունների բաժինը անցել է 80 %-ից (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6[11]

Ծառայությունների ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2016 թ. դրությամբ (տոկոսներով)

Զբաղեցրած հորիզոնականը բոլոր երկրների շարքում	Երկիր	Ծառայությունների ավելացված արժեքի մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ի մեջ, %	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (հազար ԱՄՆ դոլար)
1	Լյուքսեմբուրգ	87.4	102.831
2	Կիպրոս	86.7	23.324
3	Մալթա	84.3	25.058
55	Վրաստան	65.4	3.854
66	ՌԴ	62.8	8.748
74	Թուրքիա	60.7	10.788
115	Հայաստան	54.7	3.606
128	Չինաստան	51.6	43.681
156	Ադրբեջան	42.3	3.877

[9] Տե՛ս **Диесперова Н. А., Жданова Л. А.** О роли сферы услуг в современной экономике, Вестник РУДН, серия Экономика, 2009, № 3, էջ 19-25:

[10] Հաշվարկները կատարվել են մեր կողմից վիճակագրական տվյալների հիման վրա:

[11] Աղբյուրը՝ «ՀՀ ծառայությունների ոլորտի վերլուծություն, Avenue consulting group LLC», էջ 43:

Աղյուսակ 6-ի տվյալները վկայում են, որ 2016 թ. արդյունքներով ամենաբարձր ցուցանիշը պատկանում է Լյուքսեմբուրգին, իսկ Հայաստանը զբաղեցնում է 115-րդ տեղը: Հետարդյունաբերական երկրների համար բնութագրական է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, որը եվրոպական երկրներում բավականին բարձր է: Ճիշտ է, ազգային տնտեսության զարգացման մակարդակը որոշվում է համաշխարհային տնտեսական համակարգում նրա ունեցած դիրքով, ազգային հարստության օգտագործման արդյունավետության մակարդակով, բնակչության բարեկեցությամբ և այլ ցուցանիշներով[12], սակայն, մեր կարծիքով, զարգացման և բնակչության կենսամակարդակը բնութագրող այդ ցուցանիշը հնարավոր է կիրառել երկրի պատկանելությունը այս կամ այն խմբին որոշելու համար, բայց այն չպետք է լինի որոշիչ, քանի որ կարող է թյուրըմբռնման պատճառ դառնալ: Աղյուսակից երեվում է, որ Չինաստանի նույն ցուցանիշը (43,681 ԱՄՆ դոլ.) համարյա կրկնակի բարձր է երկրորդ հորիզոնականը գրաված Կիպրոսի ցուցանիշից (23,324 ԱՄՆ դոլ.), բայց դա դեռևս չի նշանակում, որ Չինաստանի բնակչության կենսամակարդակը բարձր է Կիպրոսի բնակչության կենսամակարդակից: Միաժամանակ, աղյուսակի տվյալներից չի հետևում, որ Կիպրոսը պատկանում է հետարդյունաբերական երկրների տիպին, քանի որ դեռ պարզ չէ, թե այդ երկրի ծառայությունների կառուցվածքում որ խմբերն են առաջատար:

Իբրև եզրակացություն կարող ենք ասել, որ կիրառելով Քոլին Քլարկի՝ տնտեսության եռահատված մոդելը՝ հնարավոր է միայն մոտավոր որոշել երկրի պատկանելությունը այս կամ այն խմբին, իսկ անցումային տնտեսությամբ երկրների համար այն առավել բարդ է: Այս հարցի պարզաբանման համար պետք է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ, քանի որ երրորդային հատվածի առաջնությունը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս հարցի վերաբերյալ: Ինչպես նշվեց, համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում այս հարցում վճռական է դառնում տվյալ երկրում գիտատար խմբերի գերակշռությունը ծառայությունների ոլորտում:

Ծառայությունների ոլորտին առնչվող վիճակագրական համապատասխան տվյալների բացակայությունը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ շատ այլ երկրներում հնարավորություն չի տալիս սպառիչ պատասխանելու խիստ կարևոր այս հարցերին: Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության վիճակագրական ծառայությունը պետք է համապատասխան կազմակերպական աշխատանքներ իրականացնի մեր երկրի տնտեսությունում ծառայությունների ոլորտն արտացոլող վիճակագրական բազան առաջատար երկրներում ընդունված վիճակագրական չափանիշներին համապատասխանեցնե-

[12] Տե՛ս **Վ. Հովսեփյան, Մ. Եղիազարյան**, Ազգային տնտեսություն, ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 6:

լու համար: Այդ դեպքում նկատելիորեն կմեծանա Քոլին Քլարկի տեսության կիրառական նշանակությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության վիճակը հետարդյունաբերական երկրի տեսանկյունից գնահատելու առումով:

Բանալի բառեր – *եռահատված մոդել, առաջնային հատված, երկրորդային հատված, երրորդային հատված, ծառայությունների ոլորտ, ծառայությունների ոլորտի կառուցվածք, գիտատար խմբեր, մեկ շնչին ընկնող ՀՆԱ*

АРМЕН НЕРСИСЯН – *Проявления модели трёхсекторной экономики в странах с переходной экономикой (на примере РА).* – В статье рассматривается возможность применить теорию Колина Кларка о трёх секторах экономики в странах с переходной экономикой. На основе статистических материалов доказывается, что в ситуации с переходной экономикой одного лишь анализа отраслевой структуры недостаточно, чтобы выявить, к какому типу относится страна. Необходимо также изучить сферу услуг с позиции лидерства групп.

Ключевые слова: *трёхсекторная модель, первичный сектор, вторичный сектор, третичный сектор, структура сферы услуг, наукоёмкие группы, ВВП на душу населения*

ARMEN NERSISYAN – *Manifestations of Three-Sector Economy Model in Countries with Transition Economies (on the example of RA).* – The article examines the application possibilities of Colin Clark's three-sector economy theory in the countries with transition economies. Based on the analysis of statistical data, it is proved that for countries with economies in transition, only the analysis of the sector structure of the economy is not sufficient to conclude which type of country it belongs to. From this perspective, the need to study the services sector is based on the priorities of the knowledge-based groups.

Key words: *three-sector model, primary sector, secondary sector, tertiary sector, services sector, services sector structure, knowledge-based groups, per capita GDP*